ՍՊՐԻՆՔՈՒՐ



ՊԱՐԱՐԵՐ 2026.1

ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր

Հրատարակիչ՝
«ԱՂԲՅՈՒՐ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ» ՍՊԸ,
վկայական՝ 02Ա 050591
Լույս է տեսնում 1923 թվականից
Վկայական՝ 1174
Գրանցման համար՝ 286.110.04218
Հեռ. 091 59 38 13
Էլ. հասցե. aghbyur@yandex.ru
Կայք. www.aghbyur.com

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ. №1. 2026

ՆԱՆՈ, ՎԱՀԵ ՎԵՐԴՅԱՆ, ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ.....2, 3, 4
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ. Ես համբուրեցի իմ փակած տան դուռը 6
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵԾԵՐԻՑ 9
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ 10, 14
ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ. Արցախյան 12
ԱՐՄԵՆ ԱՎՈ. Արցախ 13
Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ. Հավերժական զրուցակիցներ. Թումանյան 18
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԵՄԻՃՅԱՆ. Բելի խոցդրումը 22
Հետաքրքրասերի էջ 25
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ 28
Ա. ԵՂԻԱՅԱՆ. Հայերենի դասեր 30
ԲԱՌԱՇՂԹԱ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ 31

Համարում տողադարձերը կատարվում են համակարգչային ծրագրի օգնությամբ, և հնարավոր են սխալներ։

Գլխավոր խմբագիր՝
ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

Շապիկին՝
դիմերեսին՝ **ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ աշխատանքներից**
դարձերեսին՝ **ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆ, Երևան հ. 180 դպրոց, 6-րդ դաս.**

ՀԱՅԱՍՏԱՆ
ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՋ

ՆԱՆՈ

Նարինե Առաքելյան. ծնվել է 1976 թվականի օգոստոսի 3-ին Քարինտակ գյուղում: 1983 թվականին ընդունվել է գյուղի միջնակարգ դպրոց: Դեռևս 1988-89 թվականներից վատ լուրեր էին հասնում գյուղ: Պատմում էին



Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի դեպքերի մասին: Իսկ 1991 թվականից ադրբեջանական հրո-

սակները հարձակվեցին նաև Շուշիի հարևանությամբ գտնվող Քարինտակ գյուղի վրա: Ադրբեջանցիների դիրքերը նպաստավոր էին. երբ կանգնում էին գյուղի վրա կախված քարափներին, գյուղը կարծես ոտքերի տակ լիներ: Շուտով ադրբեջանցիներն իսկական կռիվ սկսեցին: Սակայն գյուղը պատրաստվել էր. կազմակերպվել էր ինքնապաշտպանության ջոկատ, որի հրամանատարն էր Վաղինակ Առուշանյանը: Այդ ջոկատի կազմում էին նաև Նարինեի երկու եղբայրները՝ Գրիշան և Գարիկը: Շուտով նրանց միացավ նաև Նարինեն (Նանոն): Դեռ կռիվը սկսվելուց առաջ Նարինեենց տունը զորանոցի էր վերածվել: Ինքնապաշտպանության գործին միացել էին նաև հայրն ու մայրը: Օր էր լինում՝ նրանց տանը ազատամարտիկներ էին գիշերում: Ն. Առաքելյանը խնամում էր նրանց, մաքրում զենքերը: 1992 թվականին 16-ամյա Նարինե Առաքելյանը ջոկատի շարքերում կատարում էր կապավորի աշխատանք, միաժամանակ մարտական գործողությունների ընթացքում ազատամարտիկներին զենք, զինամթերք հասցնում: Մարտական ընկերների վկայությամբ՝ երբ անհնար էր դարձել դիրքերին մոտենալը, Նարինե Առաքելյանը իր շան վրա էր կապում, տեղափոխում զինամթերք, իսկ շան սպանվելուց հետո, արհամարհելով վտանգը, ինքն էր զենք տեղափոխում և այդ ժամանակ էլ՝ 1992 թվականի հունվարի 26-ին, զոհվեց:

ՎԱՀԵ ՎԵՐԴՅԱՆ

26-ամյա Վահե Վերդյանը հայրենիքի նվիրյալ սպաներից էր, որի համար երկրի պաշտպանությունը վեր էր ամեն ինչից:

Վահեի մաթեմատիկական առանձնահատուկ կարողություն-



ներն ու տրամաբանությունը դրսեվորվեցին դեռ մանկության տարիներից ու կանխորոշեցին նրա անցնելիք ճանապարհը:

2010 թվականին Վահե Վերդյանն ընդունվեց ՀՊՏՀ կառավարման տեղեկատվական համակարգերի բաժին, որտեղ ուսումնասիրեց մեքենայական ուսուցման մեթոդների կիրառումը ֆինանսական ոլորտներում

և կատարեց հետազոտություններ կապված արհեստական բանականության ասպարեզում: Բազմակողմանի զարգացած տղան հետաքրքրվում էր նաև պատմությամբ և քաղաքագիտությամբ: Վահեն բարի ու կարեկից մարդ էր, հավատարիմ ընկեր, նրա ազնվությունն ու անկեղծությունը առինքնում էին: Ասմունքում էր, երգում, հավաքույթների հոգին էր, ուրախությունը:

Երբ եկավ զինվորանալու ժամանակը, պարզվեց, որ Վահե Վերդյանի համար բարձրագույն արժեքը բանակն է ու ծառայությունը պետությանը: Նա զինվորական կրթություն ստացավ ու համալրեց բանակի սպայակազմի շարքերը:

Վահե Վերդյանը Հայաստանի զինված ուժերի կապավոր էր, սիրում էր զինակիցներին ու իր բանակային դիրքը: Մինչև զինվորական ծառայությունը Վահեն կամավոր մասնակցել էր ապրիլյան քառօրյա մարտական գործողություններին: ***Իսկ 44-օրյա պատերազմում նա ավագ լեյտենանտ էր ու անձնվիրաբար պաշտպանում էր իրեն վստահված հատվածը: Վահե Վերդյանը զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 26-ին: Հետմահու արժանացել է պետական մի շարք պարգևների:***

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է: 1990 թ. մարտի 18-ին Էջմիածին քաղաքում:

Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 12-ին:

Լևոն Ավետիսյանը ծնվել է ավանդապահ ընտանիքում, որտեղ մեծ կարևորություն էր տրվում հայրենիքի պաշտպանությանը: Նրա հայրը Արցախյան ազատամարտի վետերան էր, ինչը



խորապես ազդել էր Լևոնի մտածողության և արժեքային համակարգի ձևավորման վրա:

Լևոնը համառ, եռանդուն մանուկ էր և աչքի էր ընկնում հայրենասիրությամբ: Դեռ վաղ տարիքից հետաքրքրված էր ռազմական գործով: Ուստի ընդունվել էր ռազմական համալսարան, որտեղ աչքի էր ընկնում իր կարգապահությամբ և ռազմագիտական հմտություններով: Գերազանցությամբ ավար-

տելով համալսարանը՝ դարձավ հետախույզ սպա:

2016 թվականի Ապրիլյան պատերազմի ընթացքում Լևոն Ավետիսյանը, ղեկավարելով հատուկ նշանակության վաշտ, ցուցաբերել է բացառիկ քաջություն: Իր ռազմական փորձով և վճռականությամբ նա հաջողությամբ կատարել էր բազմաթիվ կարևոր առաջադրանքներ:

2020 թվականի պատերազմի սկզբից Լևոն Ավետիսյանը չվարանելով վերադարձել էր ռազմաճակատ՝ ղեկավարելու հետախուզական գործողություններ: Նրա հմուտ ղեկավարությամբ հնարավոր էր դարձել ապահովել զորքի անվտանգ դուրսբերումը շրջափակումից:

Լևոն Ավետիսյանի վերջին մարտն ընթացել է 2020 թվականի հոկտեմբերի 12-ին, երբ հերոսաբար ընկել է՝ կատարելով իր զինվորական պարտքը մինչև վերջ:

Նա հիշվում է որպես քաջ, անձնազոհ և հայրենիքին նվիրված սպա:



ԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՍ ՀԱՄԲՈՒՐԵՑԻ ԻՄ ՓԱԿԱԾ ՏԱՆ ԴՈՒՌԸ...

ԻՄ ՇԱԴՈՒՄԸ...

Ես Արեն Պետրոսյանն եմ, արցախցի Արենը. ծնվել եմ Ստեփանակերտում: Ծնողներս ինձ միշտ պատմել են իմ Պետրոսյան տոհմի մասին, ու չնայած ես ապրում էի Ստեփանակերտում՝ միշտ կապված եմ եղել իմ արմատներին, որոնք շատ խորն են ու ծիլեր են տվել Ասկերանի շրջանի Պատարա գյուղում, մի խոսքով՝ ես պտրեցի եմ այսօր ու միշտ:



Գյուղի հուշարձանը

ԵՐԿՈՒ ԿԵՍ ՍԻՐՏ

Իմ ամուր գյուղը՝ **Պատարա**: Իմ գյուղը տեղակայված է Արցախի հյուսիսարևելյան հատվածում: Դա պատմական Խաչենի գավառն է... Ըստ Նիկողայոս Ադոնցի՝ Պատարա /Patara/ նշանակում է քաղաք, բնակավայր: Երևի այս բացատրությունն են տվել, քանի որ այն համարվում է Արցախի հնագույն բնակավայրերից մեկը: Ուսումնասիրությունները վկայում են, որ մարդն այստեղ ոտք է դրել առնվազն Ք. ա. 1-ին հազարամյակում: Վաղնջական ժամանակներում էլ պտրեցին՝ արցախցին, պայքարել է: Քանի որ Պատարան անընդհատ եղել է քոչվոր ցեղերի նշանառության տակ, պտրեցիք իրենց տները կառուցել են անմշակ, ժեռ քարերից՝ դրանք դարձնելով անմատչելի, ամուր պատի պես: Այդպես էլ ծագել էր գյուղի անունը՝ Պարիսպ, պատ, Պատարա-Բադարա: Իսկ պտրեցի բառը ստուգաբանվում է նաև որպես ապրող, ապրողներ: Ահա այդ ապրողներից ենք և մենք՝ Պետրոս նախապապիս սերունդը՝ Պետրոսյանները...

Միքայել Պետրոսյան
Բախշի Պետրոսյան
Վալերի Պետրոսյան
Էդուարդ Պետրոսյան
Արեն Պետրոսյան...

ԿԱՄՈՒՐՋԸ ԿԱՊԱԼՆ

Սովորաբար կամուրջները ճարտարապետական կառույցներ են, որոնք արհեստական արգելանքների վրայով ճանապարհ են ստեղծում, բայց արի ու տես, որ մեր կամուրջը պիտի դառնար ճանապարհին արհեստական փակելու միջոց. Կյանքի ճանապարհը, հացի ճանապարհը, հույսի ճանապարհը…

Մեր կյանքի վայրէջքը սկսվեց **2020** թվականին սանձազերծված պատերազմով, երբ վայրենիներին հատուկ կատաղությամբ մեր աշնանային առավոտը աղմուկով խաթարվեց: Ինչ եղավ իմ գյուղին. 1991-94 թթ. Արցախյան առաջին պատերազմում նահատակված քաջերի, 1941-45թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհվածների, հուշարձանների կողքին ևս մեկն ավելացավ իմ հերոս հայրենակիցների անուններով…



Արցախյան ազատամարտի հուշահամալիրը

Իմ գյուղը կռվեց ու ապրեց, մեր այգին նորից ծաղկեց, պապիս տնկած ծառերի բերքն էլի ամբարեցինք, ի՞նչ իմանայինք, որ վերջին երեք անգամ պիտի ընկույզ քաղենք, վերջին երեք անգամ գարնանը տատս պիտի քաղեր մատղաշ խոտն ու անմահական ժենգյալ թխեր… Այսպես կիսատված ապրեցինք մինչև **2022**-ի **դեկտեմբերի 12**-ը: Առաջին «ավետաբերը» աղետալի օրերի դարձան հովհարային անջատումները: Բայց սա ի՞նչ էր, որ արցախցին վախենար: Պահոցներից հանեցինք վառարանները, էլի սկսեցինք վառելիք ամբարել: Ցուրտ էր, բայց ավելի տաք էին մեր սրտերը. տանն էինք… Հետզհետե ուտելիքի, առաջնային օգտագործման մթերքների պահանջը շատանում էր: Չնայած մեր գյուղն այնքան հարուստ էր, որ մենք՝ քաղաքացիներս էլ օգտվում էինք էդ բերքուբարիքից: Կենդանիների կեր չկար, անասունը սկսեցին մորթել, յուղ չկար… Սկսեցինք առողջ սնվել: Մենք սով չենք զգացել, հուսահատություն էլ առանձնապես չկար: Ինը ամիս գիշերը երկուսից հերթ էինք կանգնում 1,5 հացի համար: Հետզհետե հերթը դարձավ մշակույթի ձև Արցախում, քանի որ ամեն հերթ իր առանձնահատկությունն ուներ: Եթե հերթում կանայք էին կանգնած, նշանակում էր՝ լվացքի փոշի էին ստացել, եթե հերթում գոհ ու

երջանիկ փոքրիկներն էին շատ, սա նշանակում էր՝ պաղպաղակ ու կաթնամթերք կա: Իսկ եթե բացառապես տղամարդիկ էին, ուրեմն...: Լավ էր, մենք տանն էինք, մեր ոտքերի տակ հայրենիք էր, ու ոչինչ, որ շաքարավազը դոշաբն էր ու մրգի քաղցրությամբ հագեցած մուրաբան, ոչինչ, որ աշխարհին հայտնի «Արաբիկան» (սուրճի տեսակ) մեր ծնողները փոխարինեցին բոված, մանրացրած սիսեռով ու այն կոչեցին «Բլոկադիկա» (շրջափակում), կարևորը՝ օդն էր Արցախի, աշխարհի ամենամաքուր երկրի օդը:

ՎԵՐՋԻՆ ԴԱՍԸ

Ես 2023-ի սեպտեմբերի 19-ին սովորականի պես գնացի դպրոց: Դասերն իրենց բնական հունով ընթանում էին մինչև չարաբաստիկ ֆիզկուլտուրայի դասը: Դասը, որ սովորաբար ազատության ու անհոգության 45 րոպե է, ինձ համար դարձավ ազատությունս ու անհոգությունս բանտող. ի՜նչ իմանայի, որ ֆիզկուլտուրայի դասին ճիշտ շնչել սովորելը պիտի լիներ կենսական նշանակություն, պիտի կարողանայինք չխեղդվել՝ գիտակցումից, որ փակվելու է... Փակվելու է տան դուռը, փակվելու է անժամանակ... քսանչորս ժամ մնացինք ապաստարաններում, հետո դուրս եկանք, երկուսուկես օրից հասկանալով, որ էլ ելք չկա, իմ ընտանիքը սկսեց հավաքվել: Շատ բան վերցնել չէինք կարող, տատ ու պապիս գերեզմանը տանել չէի կարող, պապիս տնկած ընկույզի ծառը վերցնել չէի կարող, իմ դպրոցը բերել չէի կարող, գյուղս, Արցախս վերցնել չէի կարող... Հավաքեցինք առաջին անհրաժեշտության իրերը, տատուպապիս նկարները ու դուրս եկանք: Հերթը հասավ դուռը փակելուն. Մեր հյուրասեր, առատ, շեն տան դուռը պիտի փակեինք, ու իմ տան անդամներից ոչ մեկը այդ անել չէր ուզում, չէր կարող... Ես չգիտեմ՝ ինչպես ուժ գտա մեջս ու բանալին մոտեցրի դռանը, մի կերպ արցունքներս թաքցնելով՝ կողպեցի մեր տան դուռը՝ էդ կողպեքի մեջ թողնելով մանկությունս, ընկերներիս, դպրոցական անհոգությունս... Ես համբուրեցի իմ փակած տան դուռը: Ես՝ Արեն Պետրոսյանս, բանալու ամեն պտույտի հետ մեծացա մի քանի տարով, ինքս ինձ խոստացա, որ հետ եմ գալու ու ես եմ բացելու իմ դուռը, ու այս անգամ համբույրը լինելու է կարոտած, համբույր բարևի, համբույր հավերժության: Հույսով ու հավատով սպասենք մեր կապույտ երազների ու ինձ ապրեցնող ողջույնի՝

Արե՛ն, Ազատ Արցախը ողջունում է Ձեզ...

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀԱՅ ՄԵԾԵՐԻՑ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱԲՈՎՅԱՆԸ ՄԵՐԺԵՑ ԿԱՅՍՐՈՒՀՈՒՆ

1836 թ. փետրվար:

Խաչատուր Աբովյանը Պետերբուրգում հրավիրվում է ռուս կայսրուհու մոտ:



ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ՖԵՈԴՈՐՈՎՆԱՆ նրան ընդունում է Ձմեռային պալատում, շքախմբով:

Թագուհին հայտնում է իր համակրանքը, որ Աբովյանը, ամեն տեսակ նեղությունների հանդիպելով, կարողացել է գալ Հյուսիս և բարձրագույն ուսում ստանալ:

Հայտնում է իր հարգանքը դեպի հայ ազգը և Աբովյանի հետ խոսում է նրա ապագա գործունեության մասին:

Կայսրուհին նրան առաջարկում է մշտական բնակություն հաստատել Ռուսաստանում, դառնալ Պետերբուրգի հնագիտական ընկերության անդամ, իբրև իր խոսքերի ապացույց՝ ոսկետառ վկայական է հանձնում Աբովյանին:

Սակայն վերջինս նրբանկատորեն մերժում է:

Նա ծառայելու է միայն իր երկրին ու իր ժողովրդին:

«Քանաքեռ, Քանաքեռ, իմ սիրագորով ծննդավայր, քո անունը, քո հրապույրներն ավելի վսեմ են, առավել երջանկացնող, քան ես երախտագիտությամբ ու երկյուղածությամբ կարող եմ վերհիշել ու պաշտել:

Դու պարգևեցիր ինձ գոյություն, երիտասարդություն, որոնք դեռևս շատ ու շատ հեռու են քո ստեղծագործ ուժերին արժանի լինելուց:

Համբուրելու եմ քո հողը, հենց որ ոտքս դնեմ նրա վրա. մինչև իսկ իմ գերեզմանը, իմ աճյունը հավատարմությամբ կուղեկցեն քեզ»:

Հ. ՉԱՐԽՉՅԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Երևանի համար 180 դպրոցի նկարչական խմբակի սաները

Ղեկավար՝ ԼԻԼԻԹ ԲՐՈՒՏԿԱՐՈՅԱՆ



ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
6-րդ դաս.



ՄԵՆՈՒԱ ԽԱԼԱԹՅԱՆ
6-րդ դաս.



ՍՈՖԻ ՂԱԶԱՐՅԱՆ
7-րդ դաս.



ԿԱՏԱԼԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
6-րդ դաս.



ՆԱՏԱԼԻ ՄԻՍԱԿՅԱՆ
6-րդ դաս.



ՄԱՐԻԱՆՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ
7-րդ դաս.



ԱՐՓԻ ԿԱՂԻՆՅԱՆ
6-րդ դաս.



ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆ
6-րդ դաս.



ԼՈՒՍԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ
7-րդ դաս.



ՄԱՆԵ ՄԱՄՅԱՆ
6-րդ դաս.



ՇՈՒՇԱՆԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
7-րդ դաս.



ՎԻԿՏՈՐՅԱ ՊԱԼՅԱՆ
6-րդ դաս.



ՄԱՆԵ ԳԱԼՈՅԱՆ
7-րդ դաս.



ՆԱՏԱԼԻ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ
7-րդ դաս.



ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՑԱԽԱԿԱՆ

Անհանգիստ է նորից հինավուրց
Արցախում,
Արևաքամ է հողը, ու շեներն են
լքված…
Արյան ծարավ նեռը մեր տան
դուռն է բախում,
Նորից գաղթ ու ավեր,
ճակատագրեր բեկված:

Իսկ աշխարհը անհոգ, համր է,
խուլ է ու կույր,
Կրկնվում է, ավա՛ղ,
պատմությունը դաժան,
Եվ աշխարհի առջև սառնասիրտ
ու անհուր,
Սուր է ճոճում նորից ցեղասպանը
խուժան:

Բայց Արցախը հայոց երբեք չի՛
գա ծնկի,
Որքան էլ շառաչեն հրանոթ ու
ական,
Եվ արցախցուն խրոխտ, ո՛չ, չի՛
ահաբեկի
Թրքացեղ քոչվորը՝ պիղծ ու
թափառական:

Հորդաները վայրագ կանցնեն ու
կգնան
Եվ արժան կդառնան սարսափի
ու վախի…
Իսկ Շուշիում հայոց՝ անպարտ
ու առնական,
Կփողփողա նորից եռագույնն
Արցախի:

***

Ո՛վ հինավուրց Արցախ աշխարհ,
Աշխարհի մեջ՝ մի բուռ նշխար:

Դու՝ Ամարաս ու Դադիվանք,
Դու՝ սրբալույս մասունք մի թանկ:

Դու Գանձասար, խրոխտ Շուշի,
Չե՛ս հանձնվել դու ուրիշի:

Դու՝ և՛ Բերձոր, և՛ Քարինտակ,
Դու՝ մարտական, վեհ ու շիտակ:

Վարարակն դու հնօրյա,
Դու՝ Արցախցու քաջ բնօրրան:

Դու՝ Քարվաճառ ու Կովսական,
Դու՝ հայոց հող հերոսական:

Դու՝ ընդվզող ոգին դարի,
Պիտի ջնջես նեռին, չարին:

Դու՝ հինավուրց, անպարտ երկիր,
Արցախ, հաղթի՛ր, Արցախ, երգի՛ր:

Լեռնաճվար հրաշք աշխարհ,
Աշխարհի մեջ՝ մի բուռ նշխար:

Դու՝ անառիկ, հավերժ մի բերդ՝
Մայր քաղաքով Ստեփանակերտ:

ԱՐՄԵՆ ԱՎՈ

ԱՐՑԱԽ



Ուր էլ տանեն ճամփաներն ինձ,
Իմ սրտի մեջ քո սարերից
Բույր եմ տանում,
Աշխարհներին լուր եմ տանում
Կանաչ-կարմիր քո օրերից:
Քո կյանքի պես պարզ ու խրոխտ,
Քո հոգու մեջ դարձած աղոթք
Հողագործի երգն եմ տանում...
Ձորերի մեջ երազ դարձած,
Քամիներից փախած հեռու՝
Քո ձորերի մեզն եմ տանում,
Դարեր ի վեր սիրտդ այրող
Քո պապերի վերքն եմ տանում:
Ու՛ր էլ տանեն ճամփաներն ինձ,
Եվ ուր էլ ինձ բախտը նետի,
Մեղրահացի նման անուշ,
Ժայռերիդ պես ամուր ու ջինջ,
Մանկաժպիտ և կենսաբեր
Քո բարբառն եմ ինձ հետ տանում:
Իմ աչքերում մի անսահման երազ
դարձած՝
Մեր ցավերի նման երկար,
Մեր պատմության նման վճիտ
Քո Թարթառն եմ ինձ հետ
տանում,
Քո արդարն եմ ինձ հետ տանում:
Մեր երգի մեջ խորհուրդ դարձած՝
Ձինվորի պես միշտ անվեհեր
Եվ անսասան մեր ոգու պես
Քո Մռավի սարն եմ տանում:
Իմ մանկության հեքիաթի պես,
Արցունքի պես խոր հուշերի
Քո գարունքի հոտն եմ տանում:
Հեռուներից ինձ տուն բերող,
Մոր կաթի պես անուշահամ
Քո սարերի օդն եմ տանում:
Գույնն եմ տանում քո դաշտերի,
Ե՛վ արտերիդ ալիքները,
Ե՛վ քո հոգու բարիքները...
Եվ այն, ինչ որ կապում է ինձ
Այս քարեղեն աշխարհի հետ:
Ուր էլ տանեն ճամփաներն ինձ,
Իմ սրտի մեջ
Քո աշունի գույնն եմ տանում,
Ծիծեռնակի բույնն եմ տանում
Եվ երդման պես
Մեր սրտերում որոտ դարձած,
Մեր աչքերում կարոտ դարձած
Քո անունն եմ ինձ հետ տանում...
Եվ իմ տունն եմ ինձ հետ տանում,
Ուր յոթերորդ պորտն է արդեն
գերդաստանի,
Որ օջախի ծուխը անշեջ
Վառ է պահում:
Հորովելիդ նման մաքուր
Եվ երգերիդ պես գեղանի
Քո ձմեռն եմ ինձ հետ տանում:
Աշխարհի մեջ ինձ Մարդ պահող
Եվ ապրելու ոգի տված,
Արարելու ոգի տված
Քո մեծ սերն եմ ինձ հետ տանում:
Եվ ինձ այս մութ աշխարհի մեջ
Ի՛մն եմ պահում:

ՔԱՆԻ ԵՍ ԿԱՄ

Ուրիշների անծայրածիր տիեզերքում ես չորս պատի սահմանների մեջ մտած, անկամ մի դատարկ կամեցող եմ:

Օրը կգա, բարին էլ հետը, բայց քանի որ ոչ օրն է եկել, ոչ էլ բարին, ես անցյալով եմ ապրում: Ապրած, բայց չգնահատած պահերով, զգացած, բայց ուշադրություն չդարձրած հույզերով, ժամանակ սպանած ու փոշմանած ակնթարթներով:

Այդ պատճառով էլ կպատմեմ անցյալի թերթված էջերի մասին, որոնցից մեկի մեջ գրված է հետևյալը...

Հոկտեմբերի 25. վերջին նամակը դողացող ձեռքերով գրելուց հետո չշտապեցի լամպի լույսը անջատել, վերջին անգամ ցանկացա աչքի տակով անցկացնել գրածս: Համոզվելով, որ ամեն ինչ ճիշտ եմ որոշել և նամակումս տառասխալ չունեմ՝ պառկեցի քնելու: Դրսի ամպագոռգոռ եղանակը ենթադրում էր թախիծ, բայց ներքուստ ես հանգիստ էի, նույնիսկ երջանիկ: Տագնապալից մտքերիս պատճառը միայն սպասումն էր, թե երբ է անցնելու այս երկու օրը, որ գնամ առաջնագիծ: Չնայած դրսի անձրևի ուժեղ ձայնին և իմ սպասողական վիճակին՝ կարողացա քնել: Գիշերն էլ հանգիստ էր անցել, առանց միջադեպերի: Կողքի հարևանները չէին բաժանվել, իսկ առավոտն ուներ մի խորհրդավոր գույներանգ: Այն մի հույս էր պարունակում, դրական մի զգացում: Այդ հույզերով առաջնորդված, ինչպես նաև ձեռնափայտիս ուղեկցությամբ, նամակը մյուս ազատ, բայց դողացող ձեռքումս պահած՝ ուղղվեցի դեպի զինկոմիսարիատ:

Դռները բացվելուն պես ինձ վրա թափվեց քննադատող հայացքների մի մեծ ալիք: Հայացքների պատճառ դարձած մտքերն էլ արդեն պարզից պարզ էին. «Եկել է տղային բանակից ազատելու»,- հավանաբար, ավելի ճիշտ՝ հաստատ, մտածում էին նրանք:

Ափսոս՝ տղա չունեմ, չնայած բանակ գնալու տարիքի տղա ունենալու համար էլ չափազանց ծեր չէի, ինչը, իհարկե, չէր երևում իմ տեսքից: Ժամանակս քիչ էր այդպիսի մանրուքների վրա կենտրոնանալու համար: Մոտենալով՝ պատահական աշխատակցի փոխանցեցի դողացող ձեռքումս արդեն ճմրթված թուղթը և ավելացրի.

«Սա փոխանցեք ձեր գլխավորին, ես մեծ մարդ եմ, կարգին ու ձևերին ծանոթ չեմ»:

Բարետես երիտասարդը, առանց ավել-պակաս հարցեր տալու, կատարեց չակերտավոր տարեցի խնդրանքս: Ինձ հասանելիք գործը ավարտելով՝ վերադարձա տուն, վերադարձա իմ սպասմանը: Հուրախություն ինձ՝ սպասումը այս անգամ գթասիրտ գտնվեց իմ հանդեպ և քիչ տանջեց: Հաջորդ օրը նամակիս պատասխանը գտա փոստարկղում: Այն խառը զգացողություններ առաջացրեց, հիմնականում՝ ուրախության հիսուն երանգները: Նամակի ընդհանուր բովանդակությունն ըմբռնելով և նույնիսկ նախադասությունը մինչև վերջ չկարդալով՝ անցա նախապատրաստական աշխատանքներին:

Ցանկություն չկար մեկ վայրկյան անգամ հապաղելու, ամեն ինչ հապճեպ էր պետք ավարտել: Շորերը, կոշիկները, առաջին անհրաժեշտության իրերը շատ արագ հավաքվեցին, չեմ կարող ասել՝ ինչ-որ բան մոռացա, թե չէ, բայց այդ ամենը այդքան էլ էական չէր: Կարևորը, որ ես լիովին կազմ և պատրաստ էի, ամենակարևորն էլ՝ կամքս, ավելի ճիշտ՝ երևակայական կամքս, միշտ ինձ հետ էր:

Երևի ճանապարհային և նմանատիպ եռուզեռային տվյալներով չծանրաբեռնեմ և անցնեմ արդեն բուն թեմային: Ժամեր անց ես տեղում էի՝ առաջնագծում: Մարտական ոգին, ինչ մեղքս թաքցնեմ, պասիվ էր, չնայած ակտիվ լինելու պատճառ էլ չկար, թշնամին արդեն, կոպիտ ասած, մեր տներն էր լցվում, կարծես այդպես էլ պետք է լիներ:





Սակայն քանի կամ ես ու ինձ նման քաջերը, այդ բանը չի լինելու, ծայրահեղ դեպքում՝ լինելիքը մինչև վերջ ձգձգվելու է:

Հասնելու պահից սկսած՝ ինձ և ինձ հետ ժամանածներին զենք բաժանեցին: Դողդողացող ձեռքս հազիվ կարողացավ բռնել և չգցել այդ համարյա չորս կիլոգրամանոց զենքը: Դժվարությունները արդեն իսկ սկսվում էին, բայց հանձնվելու և նահանջելու ոչ հնարավորություն կար, ոչ էլ ցանկություն: Եթե ես, ով երկար ժամանակ վառվում էր այս գաղափարով, զենքերս վայր դնեի և՛ փոխաբերական, և՛ ուղիղ իմաստով, մնացածն էլ ի՞նչ ասեն...

Կամքս բռուցքիս մեջ հավաքած՝ մոռացության տվեցի ֆիզիկական թերություններս: Ես արդեն այստեղ եմ կանգնած և կավարտեմ սկսածս գործը:

Թեժ հակամարտություններ դեռ չէին նկատվում, առնվազն մեկերկու կրակոց սահմանին, բայց ժամանակի ընթացքում դա էլ էր դարձել առօրյայի անբաժանելի մասնիկը: Ամեն ինչ սկսել էր տարօրինակ կերպով հեշտ և հանգիստ թվալ, սակայն կյանքն ինձ հակառակը ապացուցելու հատկություն ունի և դա անում է հնարավորինս դաժան ու անխղճորեն:

Նոյեմբերի 13. մեր անուշ քունը այս անգամ խանգարվել էր ոչ թե սովորական «վեր կաց» հրամանից, այլ ահարկու պայթյուններից: Այդպիսի ձայներ չէի լսել նույնիսկ «Օսկարի» արժանացած մարտաֆիլմերի հատուկ էֆեկտներում: Թեթևակի շոկային վիճակից դուրս գալով՝ մենք վայրկենապես պատրաստվեցինք: Մի քանի րոպե անց բոլորս զբաղեցրել էինք մեր դիրքերը: Ամեն ինչ շատ խառն էր, պայթյուն, գոռոց, հուսահատության ճիչեր, սփոփանքի լոկ խոսքեր: Այս ամենը իրար էին միաձուլվել՝ ստեղծելով մի ահագին խառնաշփոթ: Ամենքն իրենց գործին էին կանգնած, բոլորը վաղուց տեղյակ էին, թե ինչ աշխատանք էին ստանձնելու նման իրավիճակներում, ցանկացածը քաջ տեղյակ էր իր պարտականությունների մասին: Թվում էր, թե միայն ես էի

անտեղյակ և շփոթված կանգնած այդ հոծ բազմություն մեջ, միայն իմ ձեռքերն էին, զենքը բռնած, անկարողությունից և հիվանդությունից դողում, միայն ես էի հաջորդ պահի համար անհանգստանում, միայն իմ կյանքն էր ինձ համար թանկ: Ու այդ բոլոր խճճված մտքերի մեջ ես հասկացա՝ ես արդեն այստեղ եմ, պահը եկել է, և քանի ես կամ, ես կպայքարեմ մինչև վերջին շունչս: Ձեռքերումս ուժ չկար զենքը բռնելու, բայց քանի ես հոգի ունեմ, այն էլ՝ ուժեղ հոգի, ես կկանգնեմ բոլորի հետ և կպայքարեմ մինչև վերջ: Ձեռքերիս դողոցը մի փոքր կարգավորելով՝ զենքը ավելի ամուր բռնեցի ու անցա կրակելու գործին:


Չեմ կարող ասել՝ շատ ժամանակ անցավ, թե ոչ, և թե քանի փամփուշտ ազատ թռիչքին հանձնեցի, բայց որ սուր ծակոց զգացի սրտիս հատվածում, դա հաստատ էր: Ի՞նչ էր դա: Նայեցի ծակող հատվածին և տեսա արյան շառագույն կաթիլներ: Ինչպե՞ս էր դա պատահել, չգիտեի և մինչև վերջ էլ չիմացա: Ցավը երևի թե կար, բայց շոկային վիճակի պատճառով ես ոչինչ էի հասկանում և զգում: Զգացողություններից մնացել էին միայն ափսոսանքը և ներքին տանջանքները, դրանք հիասքանչ համադրվում էին ներկայիս իրողության հետ, և այդ ամենը համեմվում էր տարբեր կողմերից լսվող դժոխային ձայներով:

Չգիտեմ՝ քանի ակնթարթ անցավ կրակոցից հետո, ինչքան խորհեցի և ինչքան ժամանակ ցավ չզգացի, սակայն մյուս պահին ես արդեն գետնի վրա էի: Արդեն ցավն անտանելի էր, կային նաև ուրիշ զգացողություններ, ինչպիսիք էին՝ գլխապտույտ, դող, այս անգամ արդեն՝ ամբողջ մարմնի, սրտի դանդաղ աշխատանք և նմանատիպ այլ տհաճ նախանշաններ՝ մահվան նախանշաններ: Այո՛, ես վստահ էի, որ ապրում էի իմ վերջին վայրկյանները, ճիշտ է, ոչ այնքան իմ պատկերացրածի նման էր և ոչ էլ ճիշտ վայրում, սակայն ես երջանիկ էի: Սա հնարավոր բոլոր տարբերակներից ամենալավն էր, քանի որ ես ոչ միայն կատարեցի իմ երազանքը, այլ նաև հաշվի առնելով իմ առողջական թերությունները՝ գոնե չնչին չափով օգտակար եղա հայրենիքիս:

Չնայած ես ուրիշների անծայրածիր տիեզերքում չորս պատի սահմանների մեջ մտած մի դատարկ կամեցող էի, բայց դա էլ անցողիկ եղավ: Անցողիկ էր նաև կյանքս:

Ցավոք, այդ նախանշանները սխալ էին. մահը չէր գրկել ինձ իր ձեռքերով: Ես ապրում էի, բայց ավելի ճիշտ՝ կենսաբանորեն գոյատևում: Ես՝ կամքի ուժից զուրկ կամեցողս, շարունակեցի ապրել, սակայն այս անգամ արդեն՝ գամված սայլակի վրա:

ԱՄԱԼՅԱ ԵՆԳՈՅԱՆ
Գյումրու հ. 1 ավագ
դպրոց, 12-րդ դաս



ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԶՐՈՒՅԱԿԻՑՆԵՐ

Շարքը պատմում է հանրահայտ ստեղծագործությունների մասին, և հույս ունենք, որ օգնում է ձեզ, սիրելի՛ դպրոցականներ, ընթերցելու գրքեր ընտրելու հարցում: Նախորդ համարներում ներկայացրել ենք **Ջ. ՍՎԻՖԹԻ «ԳՈՒԼԻՎԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**, **Ֆ. ՌԱԲԼԵԻ «ԳԱՐԳԱՆՏՅՈՒԱ ԵՎ ՊԱՆՏԱԳՐՅՈՒԵԼ»**, **Մ. ՍԵՐՎԱՆՏԵՍԻ «ԴՈՆ ԿԻԽՈՏ»**, **ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»**, **ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵԻ «ԲԱ-ՆԱՍՏԵՂԾԸ»** հեքիաթը, **ՖԻՐ-ԴՈՒՍՈՒ «ՇԱՀՆԱՄԵ»** երկը, **ՌԵՅ ԲՐԵԴԲԵՐԻԻ «451*՝ ԸՍՏ ՖԱՐԵՆՀԱՅԹԻ»**, **ՍԵԼԻՆՋԵՐ՝ «ՓՐԿԻՉԸ ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ»** **Ե. ՉԱՐԵՆՑԻ. «ԱՔԻԼԼԵ՞Ս, ԹԷ՞ ՊՅԵՐՈ»** և այլ ստեղծագործություններ:

Այժմ՝ **ԹՈՒՄԱՆՅԱՆ:**

Միծաղի տեսականի՝ ըստ Հ. Թումանյանի

Առաջին անգամ ժպտերես Հովհաննես Թումանյանը մեր դուռը բախում է մանկության տարիներին: Հասուն տարիքում էլ մեր սպասված հյուրն է: Բնականաբար, երբեք դատարկաձեռն չի գալիս: Այս անգամ հավերժական զրուցակիցը հայտնվում է՝ ձեռքին այն հեքիաթները, որտեղ ամեն ինչ պտտվում է ծիծաղի շուրջը:

Ինչի՞ վրա է ծիծաղում Թումանյանը: Հիմարության, որ սահմաններ չի ճանաչում: Անխելք մարդը գնում է բախտի հետևից: Բայց բախտն ու հիմարությունը անհամատեղելի են: Բախտը խելոքի մոտ է վազում, իսկ անխելքից խույս է տալիս, կամ էլ ան-



խելքն է խույս տալիս բախտից: Աստված չի օգնում, գայլն էլ հոշոտում է: Կարեկցանքի ոչ մի նշույլ. հիմար ես՝ տուժելու ես:

Կարեկցանքի նշույլ չկա նաև **«Ձախորդ Փանոսում»**: Ընթերցողը արագ հասկանում է, որ Փանոսն էլ անխելքի ցեղա-կիցն է, թե չէ եզներով սայլը չէր կանգնեցնի այն ծառի տակ, որ հենց ինքն է կտրում, ու չէր ջարդի: Իբր դա քիչ է, կացինն էլ շպրտում է վայրի բադերի վրա ու կորցնում: Վերջում էլ ինքն է կորչում:

«Բարեկենդանի» միմյանց հիմար ասող ամուսինների վրա էլ է ծիծաղում Թումանյանը: Նախ «բացահայտվում» է կինը, որ բարեկենդանին մարդու տեղ է դնում: Նրանից հետո չի մնում ամուսինը: Ճանապարհին հանդիպում է եղն ու բրինձը յուրացրած բարեկենդանին ու երկմտում. ձիո՞վ շուտ կհասնի, թե՞ ոտքով: Ի՞նչ էր պետք բարեկենդանին: Շատ արագ համոզում է. *«Մինչև քու ձին չորս ոտը կփոխի - մե՛կ, երկու՛, երե՛ք, չո՛րս - նա երկու ոտքով մե՛կ - երկու՛, մեկ՛ - երկու՛, շուտ-շուտ կգնա, անց կկենա»*: Ձին կորցրած ամուսինը տուն է դառնում, և նորից սկսվում է կռիվը. *«Մինչև օրս էլ մարդ ու կնիկը կռվում են դեռ: Սա նրան է ասում հիմար, նա՝ սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում»*:

Պարզվում է՝ հիմարությունը վարակիչ է: **«Կիկոսի մահում»** մի ամբողջ ընտանիք է վարակվել: Աշխատելիս հայրը ծարավում է, մեծ աղջկան ուղարկում ջրի: Եվ հենց այդտեղ էլ վրա է հասնում հիմարությունը: Աղջիկը արագ-արագ ամուսնանում է, Կիկոս անունով որդի ունենում, ով բարձրանում է ծառը, ընկնում քարին ու մեռնում: Խեղճը սուգ է անում: Ծնկներին խփում ու սուգ են անում քույրերը, մայրը, հայրը...

Բայց պարզվում է՝ սրանց մեջ էլ խելոք կա. հայրն է. *«Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլնեք, Կիկոսն էլ կենդանանալու չի»*: Խելոքին լսում են. ունեցած-չունեցած միակ եզը մորթում, մի քթոց ալյուրը հաց թխում, ժամ ու պատարագ անում, նոր հանգստանում:

Բոլորովին ուրիշ՝ լիաթոք ծիծաղ է **«Սուտլիկ որսկանում»**: Որսկանը չափազանցություն կանի: Ի՞նչ չափազանցություն, սուտ կասի: Բայց ի՞նչ սուտ: Հրաշալի ու բարձրարվեստ: Հինգ ու վեց հոգով որսի է գնում: Ե՞րբ է գնում. «հորս կնունքով, մորս ծնունդով»: Հենց առաջին տողերից երևակայությունը, թևավոր նժույգ դարձած, դեպի երկինք է ճախրում: Անպարագիծ ու անսանձ: Կարող ես՝ հասի՛ր հետևից. «Մին էլ տեսնենք երեք լիճ. երկուսը՝ ցամաք, մինի մեջ էլ

ընկի ջուր չկա: Մին էլ, ըհը, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են ճչում երեք հատ սիպտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի»: Առանց հրացանի որս են անում, անբերան դանակով բադ են մորթում, անտակ կաթսայում էլ միս ու բրինձ եփում ու վրա պրծնում. *«.... Կերա՛նք, կերա՛նք. ոչ աչքներս բան տեսավ, ոչ բերաններս բան մտավ»*:

Բառը ճշգրիտ է ընտրվել. ոչ թե սուտասան, այլ սուտլիկ որսկան: Փաղաքշական երանգը այլ բան մտածելու տեղ չի թողնում: Թումանյանն էլ ծիծաղում է ոչ թե սուտլիկի վրա, այլ նրա հետ միասին:



Իսկ ահա **«Քաջ Նազարում»** գլուխ է բարձրացրել հի-մարութ-յան համաճարակը: Իր հարազատ գյուղում հերոսը հայտնի էր Վախկոտ Նազար անունով: Ամեն ինչ սկսվեց գյուղի քահանայի անմեղ կատակից. ճանճ սպանած Նազարի դրոշին գրում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի, ջարդի հազար:

Ի՞նչ իմանար քահանան, որ կատակը գլորվելով ու ահագնանալով բախտի ու փառքի է արժանացնելու Վախկոտին:

Նազարը, բացի վախենալուց, ոչինչ չի անում: Անտառում վախից աղմկում է՝ ձիու տեր է դառնում: Անծանոթ գյուղի հարսանքատանը իր համար սուսուփուս նստում է: Միմյանց բոթելով՝ գյուղացիներն էն հարցուփորձ անում, ուզում են իմանալ ով լինելը: Ի վերջո, գյուղի քահանան կարդում է դրոշին գրված տողերը: Հենց այստեղից էլ ծայր է առնում հիվանդության համաճարակը: Որտեղ՝ հիմարություն, այնտեղ էլ սնապարծություն. *«Եվ մարդիկ են գտնվում, որ պատմում են նրա արած քաջագործությունները, հին ծանոթությունն ու միասին անցկացրած օրերը»*: Պարզում են, որ ծառա չունի, քանի որ ամբողջ աշխարհն է նրա ծառան, ժանգոտ երկաթի կտորով է ջարդում հազար, քանի որ լավ թրով սովորական քաջերն էլ են ջարդում.



«Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը: Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար»:

Հարբած հարսանքավորների պատմածը հասնում է հսկաների երկիր: Սրանք էլ Նազարի դողալը զայրանալու տեղ են դնում, հպատակվում ու իրենց քրոջը կնության տալիս նրան:

Իսկ Նազարը շարունակում է ոչինչ չանել: Նրա փոխարեն հիմարացած բազմությունն է աշխատում: Վախից վագրի վրա ընկածին հերոս են սարքում. գազանին ձի էր դարձրել: Թշնամու հիմարացած բանակն էլ է խուճապահար փախչում. ծառերը արմատախիլ անելով՝ իրենց վրա է գալիս անհաղթ հերոսը: Ահա այսպես Նազարը թագավոր է դառնում. ***«Մին էլ տեսնում է աշխարհը իր բռան մեջ»***:

Հանճարեղ վերջաբան ունի հեքիաթը. «Ասում են՝ մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում, ծիծաղում է, ասում է.

- Ի՜նչ քաջություն, ի՜նչ խելք, ի՜նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդու բախտն է: Բախտ ունես՝ քեֆ արա...:

Եվ ասում են՝ ***մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհի վրա»***:

Հանճարեղ վերջաբան՝ իմաստուն ժպիտով. քաջնազարականությունը հավերժական երևույթ է, ուրեմն մի՛ հիմարացիր, թե չէ թագավորդ Նազարն է լինելու, թե չէ պատգամավոր, նախարար, մեծ կամ փոքր ձեռնարկության ղեկավար էլ է դառնալու: Ամեն օր, բոլոր ժամանակներում:

ՔԱՆԻ ԿԱ ՀԻՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԹՈՒՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԲԵԼԻ ԽՈՑՈՒՄԸ

Մեծ բախումից մի երկու ժամ անց Հայկը տեսավ, որ շուրջը գրեթե մարդ չկար, բոլորին հետ էին քշել: Աջից ու ձախից իրեն էին հասնում որդիների՝ Արամանյակի, Խոռի ու Մանավազի ձայները, որ վստահ կանչերով հավաքում էին կռվող ջոկատներին, բայց թոռների ձայները չէր լսում: Անհանգստությունից չորսկողմը նայեց, սրեց ականջները, սակայն դարձյալ ոչինչ չլսեց: Երբ հասավ գետին, կռացավ, արագ ողողեց դեմքը, ազատվեց արյան տհաճ հոտից ու երբ բարձրացրեց հայացքը, տեսավ, որ թշնամու ընտիր սպառազինված մի խումբ շրջվել, բլրի լանջով բարձրանում էր: Հայկը լարեց տեսողությունը և վայրկյան չանցած՝ գտավ նեռին: Բելը գնում էր՝ ամբոխից բավական առաջ ընկած, նշաններ կրող ցցունքով երկաթե գլխանոցով: Իր սև մարմինը նա լավ զրահապատել էր. թիկունքին ու լանջին պղնձե տախտակներ ուներ, թևերի ու սրունքների վրա՝ հատուկ պահպանակներ, մեջքի պիրկ գոտուց կախված էր երկսայրի սուրը, ձախ ձեռքով բռնել էր վահանը, իսկ աջ ձեռքում ճոճվում էր երկար նիզակը:

- Բայց մի հարցնող լինի՝ ինչի՞ համար ես բռնել նիզակը,- շշնջաց Հայկը:- Մի՞թե ես թույլ կտամ, որ դու բազուկդ անգամ շարժես:

Այս ասելով՝ նա նշան տվեց Կոռնակին, վերցրեց նրանից հսկա աղեղը, նետերով լի կապարճը գցեց ուսին և գետն անցնելով՝ դիրքավորվեց ու ամբողջ ձայնով որոտաց.

- Բե՛-ե՛-ե՛լ...

Բելը շրջվեց, նրանց հայացքները հանդիպեցին... Հենց այդ պահին Հայկի ամուր մատները քաշեցին լարը, և Հայկն ավելի շատ զգաց, քան թե տեսավ իրականությունը: Երեքթևյան նետի սուլոցից նա հասկացավ, որ նետն անվրեպ է թռել, բախման ձայնից հասկացավ, որ երկաթե սլաքը տերևից էլ փափուկ կտրեց նեռի պղնձե լանջապանակը, իսկ Բելի խլացնող գոռոցից հասկացավ, որ ստոր ճիվաղը շունչը փչեց: Թե ինչ տեսան Բելի դրանիկները, Հայկը նույնիսկ պատկերացնել չէր կարող, քանի որ դեռ բլրի ստորոտում էր: Բայց երբ աղաղակն ու վայնասունը բռնեցին աշխարհը, երբ նույն այդ դրանիկները սկսեցին նետել զենքերն ու սև դոդոշների պես փախչել, նա արագ բարձրացավ և տեսավ աննկարագրելին... Իր արձակած նետը շամփրել էր Բելին, թիկունքից դուրս եկել և խրվել հողի մեջ:

Այդ պահին, երբ Հայկը թեթևակի թեքված նայում էր մեկ տապալված Բելին, մեկ հողի մեջ խրված նետին, համիարզ Կոռնակը ամբողջ ուժով փչեց հաղթության շե-

փորը, և դաշտ ու բլուր սկսեցին որոտալ.

- Հա՛ղ-թա՛-նա՛կ, հա՛ղ-թա՛-նա՛կ, հա՛ղ-թա՛-նա՛կ…

- Հաղթանա՛կ,- հեռավոր կանչերի միջից լսեց Քարթլոս եղբոր թավ ձայնը:

- Հաղթանա՛կ,- ականջի մեջ պայթեց Արամայիսի զրնգուն կանչը, և նույն վայրկյանին մի զույգ ամուր բազուկներ իրեն կտրեցին հողից:

մայիսը, ապա ծնկեց և գետնից դուրս քաշեց արնաթաթախ նետը:

- Բոլորդ ո՞ղջ եք,- հարցրեց Հայկը, երբ ոտքերը վերջապես դիպան հողին, և կարոտով սկսեց կրծքին սեղմել թոռներին ու զինվորներին:

- Թեթև վերքեր ունենք, բայց դա ի՞նչ է որ: Դու շանսատակ արիր Բելին,- նետը բոլորին ցույց տալով՝ ասաց Արա**մայիս**ը:

- Զորքը լեղապատառ փախչում է, չհետապնդե՞նք, պա՛պ,- հարց-



Նկարը՝ Տարոն Շահինյանի

- Պա՛պ, դու շամփրեցիր Բելին: Մենք ամեն ինչ տեսա՛նք,- Հայկին խելակորույս պտտեցնելով ասում էր Կադմոսը:

- Երազդ ճիշտ դուրս եկավ, պա՛պ, ուղղակի աչքի տեղ թոքը շամփրեցիր,- հիացած գոչեց Արա-

րեց թոռներից ամենակրտսերը՝ Բազը:

- Քարթլոսն արդեն լուծում է դրանց հարցերը: Մի տեսեք՝ ո՛նց է ճակատ ճակատի զարկում վախկոտ նապաստակներին… Բայց հիմա ճի՛շտն ասեք, Բելոքսի սպան-

վելուց հետո ո՞ւր կորաք:

- Պա՛պ, մենք ուզեցինք բլրի հետևից հարձակվել, բայց հասանք այն պահին, երբ դու խոցեցիր Բելին:

- Դուք չար մտրուկներ եք: Տեսեք, որ գայլերը մի օր ձեզ չուտեն…

- Հենց էլ թող ուտեն,- լսվեց Մանավազ որդու ձայնը:- Անհնազանդ քուռակներին գայլերը թող ուտեն:

- Այս թեթև աղեղներո՞վ էիք ուզում սպանել Բելին,- հեգնալից ասաց հևիհև դեպքի վայր հասած Խոռը և ձախ ձեռքով գրկեց հորը:

- Աջդ վիրավո՞ր է,- շշնջաց Հայկը:

- Կարևորը՝ չի կտրվել,- նույնպես շշնջալով պատասխանեց Խոռը, ապա բարձր գոչեց.

- Հա՛յր, բոլորը տեսան նետիդ սլացքը և հիմա այստեղ են գալիս: Բայց գիտե՞ս, ակնթարթը ինձ դար թվաց…

- Դու որտեղի՞ց տեսար:

- Հենց քո թիկունքից: Երբ դիրքավորվեցիր ու նշան բռնեցիր, ես, գետի մեջ կանգնած, շունչս պահած նայում էի:

- Բոլորդ էլ փառահեղ կռվեցիք: Մանավազն ու դու մի-մի գունդ ոչնչացրիք, եղբայրներս կայծակ թափեցին հսկաների գլխին, իսկ Արամանյակի մասին էլ չեմ ասում: Երբ թուրը գլացավ, իր հսկա նիզակով նա սկսեց միանգամից 4-5 հոգու շամփրել: Բայց ո՞ւր է Արամանյակը:

- Հորեղբայր Եգրոսի հետ վիրավորներին է դարմանում, հա՛յր, շատ վիրավորներ ունենք,- ասաց Մանավազը և մտավ Խոռի առողջ թևի տակ՝ նեցուկ դառնալով վիրավոր եղբորը:

- Մենք էլ հիմա կգնանք նրանց մոտ: Բայց այս ճիվաղի մարմինն ի՞նչ անենք: Կադմո՛ս, զինվորներիդ հետ իջեցրու սրա լեշը, տեսնենք՝ ինչ ենք անելու:

- Էլ ինչո՞ւ իջեցնենք… Վառենք, մոխիրը քամուն տանք, հա՛յր,- բորբոքված գոչեց Խոռը՝ արյուն ցայտեցնելով վիրավոր թևից:

- Ո՛չ, որդի՛ս, ամեն մի փոշեհատիկից գուցե մի չար դև ծնվի: Դրան պիտի թաղենք մի բարձր տեղ, որ արար աշխարհը տեսնի ու հիշի չարի վախճանը:

- Ափսո՛ս մեր հողը, որ սրան պիտի առնի իր մեջ,- հոր որոշման դեմ բողոքեց Խոռը:

- Ափսո՛ս,- գոչեցին Բելի լեշը քարշ տվող ջահել զինվորները…

Սա պատահեց Քրիստոսի ծննդից 2492 տարի առաջ՝ Նավասարդի 11-ին

Եվս մեկ տարեդարձ, և կրկին՝ անհայտ...

ԱՄՆ ՁՈւ կազմում Առաջին և Երկրորդ աշխարհամարտերին մասնակցել են գրեթե քսան հազար հայեր: Նրանցից 500-ը զոհվել են, 1000-ը ստացել տարբեր աստիճանի վիրավորումներ, 70 հայորդի համարվում է Երկրորդ աշխարհամարտի տարիներին անհետ կորած, և սա այն դեպքում, երբ 1940-ի տվյալներով հայերի թիվն ԱՄՆ-ում չէր հասնում 180 հազարի: Քսան հազարի 90 %-ը Եղեռնից մազապուրծ եղածների երեխաներն էին, որոնք ծնվել էին յաթաղանի սարսափի տակ: Քսան հազար հայորդիներից տեղեկություններ կան առավելագույնը քսան-երեսուն հոգու մասին և այն էլ հինգ-վեց տողով: Օրինակ՝ այս լեգենդար հայորդին՝ 1916-ին Տրապիզոնի ջարդերից ԱՄՆ Մասաչուսեթս գաղթած Վարդանյանների միակ որդին...



Պենտագոնի հրթիռաշինության կենտրոնական շտաբի պետ, ԱՄՆ ՁՈւ գեներալ-մայոր Վահան Վարդանյանը Տրապիզոնից

Դպրոցն ավարտելուց հետո Վարդանյանների որդին ընդունվում է Ուեստ Փոյինթի ռազմական ակադեմիա, որն ավարտում է լեյտենանտի կոչումով: 1939-ից սկիզբ առած Երկրորդ աշխարհամարտի տարիներին Վարդանյանը

մասնակցում է ամենամեծ ու ծանր ռազմական գործողություններին: Նրա գումարտակը առաջինն է մտել ազատագրված Փարիզ...

Այնուհետև երեք տարվա ընթացքում լեյտենանտից մայորի կոչման հասած Վարդանյանն իր գումարտակով առաջինն է մտնում Նորմանդիա: 1950-ին Վարդանյանին շնորհում են ԱՄՆ ԶՈՒ գնդապետի կոչում և նրա կրծքին կախում Կոնգրեսի Երկրորդ աստիճանի փառքի մեդալը: Դրանից հետո սկսվում է Կորեական պատերազմը, իսկ հետո՝ Վիետնամականը...

1950-ին Մասաչուսեթսի ռազմական ակադեմիայի դասախոս Վարդանյանին շնորհվում է ***ԱՄՆ ԶՈՒ գեներալի կոչում***:

1971-ին Տրապիզոնցի գաղթականների որդին՝ Վահան Վարդանյանը, ստանում է արդեն գեներալ-մայորի ուսադիրներ և նշանակվում է Լոս Անջելեսում գտնվող զինված ուժերի հրիթռաշինության գլխավոր շտաբի պետ:

Ահա այսպիսի կիսատ ինֆորմացիա նման հանճարեղ ու բարձրաստիճան ռազմական գործչի մասին:

ԷԴՈՒԱՐԴ ՄԱՆՎԵԼՅԱՆ







Հայաստանում 45000 տարեկան գործիքից օբսիդիանի փաթիլ է հայտնաբերվել

Հետազոտող և հնագետ Էլերի Ֆրահիմը հրապարակել է Հայաստանում հայտնաբերված փոքրիկ, նախապատմական վանակատի (օբսիդիան, հրաբխային ապակի) փաթիլի նկարը:

«Դա կարող է լինել Արարատ 1 քարանձավի ամենագեղեցիկ հնագիտական գտածոն, բայց մեր դաշտային լաբորատորիայում իմ քիմիական փորձարկումները ցույց են տվել, որ վանակատի այս փոքրիկ փաթիլը հանվել է քարե գործիքը նորից սրելու համար, որը մոտ 45000 տարի առաջ տեղափոխվել է ավելի քան 200 կմ: Վանակատը գալիս է Գեղասարի հրաբխից՝ գծային 40 կմ հեռավորության վրա, բայց ոտքով՝ ավելի հեռու», - գրել է Ֆրահիմը Twitter-ում:

Անտոնիո Սագոնայի «Կովկասի հնագիտության ամենավաղ բնակավայրերից մինչև երկաթի դար» աշխատության մեջ կարդում ենք, որ «Սպիտակասարի և Գեղասարի հրաբուխները Հայաստանի ամենաբարձր գագաթներից են:

Վանակատը հայտնաբերվել է նրանց լանջերին մինչև 3200 մ բարձրության վրա գտնվող գոտում, տափաստանային միջավայր՝ խիստ ձմեռներով, որտեղ հնարավոր է մուտք գործել միայն հունիսի սկզբից մինչև հոկտեմբերի կեսը: Արտաքինից այս երկու աղբյուրների Վանակատները մեծապես տարբերվում են: Գեղասարինի գույները տատանվում են թափանցիկ կարմիրից և շագանակագույնից մինչև մոխրագույն և սև...»:



2026 թ.-ը մեդալատարափի նոր էջ բացեց Գյումրու «Ֆոտոն» վարժարանի պատմության մեջ. հունվարի 10-15-ը Ղազախստանում կայացած Ժաուտիկովյան միջազգային 22-րդ օլիմպիադան դարձավ ևս մեկ վկայություն այն բանի, որ գիտելիքը, աշխատասիրությունն ու նպատակասլացությունը արժանիորեն են գնահատվում:

Օլիմպիադային մասնակցեցին երկու ֆոտոնցիներ, որոնցից մեկը՝ 12-րդ ֆիզմաթ 1 դասարանի աշակերտ Հարություն Հակոբյանը, արժանացավ բրոնզե մեդալի՝ ևս մեկ անգամ հաստատելով հարազատ վարժարանի գիտական մեծ ներուժն ու կրթական բարձր մակարդակը: Մյուսը մեդալակիրը Գյումրու 41-րդ հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Մամիկոն Համբարյանն է, որը նույնպես նվաճեց բրոնզե մեդալ:

Վարժարանում անցկացվեց մաթեմատիկայի օլիմպիադայի մարզային փուլը, որը վերածվեց իսկական տոնի: Մասնակիցներն ու նրանց ծնողները բարձր ծափերով ու հանդիսավորությամբ դիմավորեցին Ժաուտիկովյան միջազգային 22-րդ օլիմպիադայի բրոնզե մեդալակիրներին:

Նրանք իրենց հաջողություններով օրինակ ու ոգեշնչող ուժ են մարզային օլիմպիադայի մասնակիցների համար:

Մեծ նպատակները ծնվում են մեծ աշխատասիրությունից:



ՇԱՆԹ ՄԿՐՏՉՅԱՆ

ՁԿՆՈՐՍՆ ՈՒ ՋՐԱՀԱՐՍԸ

Ձկնորսը ծովափին
Մի ջրահարս որսաց :
-Նա արծաթ - ոսկի է,-
Նրան ջո՛ւրը ասաց:

Ձկնորսը ծովափին
Մի կյանք էր սպասել,
Ի վերջո այդ կյանքում
Հրաշքի՛ն էր հասել...

Բայց այնպես պատահեց՝
Կարթը խորունկ գնաց
Եվ ծովի երեսին
Կարմիր գույնը մնաց:

-Ա՛խր, քեզ ի՛նչ եղավ,-
Վշտացավ ձկնորսը՝
Կարծելով հեռացավ
Վիրավոր իր որսը:

Եվ այդ է՝ դառնում էր
Թողած իր ծովափը,
Շուռ եկավ՝ լսելով
Ջրերի խուլ ծափը:

Ջրի մեջ մի չքնաղ
Ջրահարս էր լալիս,
Ու կարթից իր ծակված
Մատիկն էր ցույց տալիս:

Թե ինչու կարմրեց
Ծովափի ալիքն այն,
Ձկնորսը հասկացավ,
Արտասվեց մեղմաձայն:

-Էլ կարթը չե՛մ նետի,-
Ասաց նա,- չե՛մ անի,
Որ սովից մեռնեմ էլ՝
Գրողն ինձ թող տանի:

Ջրահարսն հավատաց
Ու լողաց դեպի ափ,
Ու սրբեց իր պոչով
Նրա դեմքը գունատ:

Իսկ տղան տուն գնաց,
Ողջ գիշեր չքնեց,
Եվ լույսը հենց բացվեց
Մատանի նա գնեց:

Շողշողուն մատանի՝
Ադամանդ քարերով,
Ալի՛քը քեզ տանի
Խորքերն իր՝ պարելո՛վ:

Մատանին լույս կտա
Խորերում պարզիպարզ,
Թագուհի՛ կդառնա
Իր որսը ջրահարս:

Սպասեց մինչ գիշեր,
Մինչև որ հասավ ափ,
Մինչև որ ոսկեպոչն
Ափ ելավ թևաթափ...

Հենց ջրի միջից նա
Իր ձեռքը դուրս հանեց,
Ձկնորսը իր գնած
Մատնիքով նշանեց:

Եվ այնքան նրբորեն
Նա պարզեց իր մատը,
Ասես յոթ խավարից
Դուրս եկած հեքիաթը:

Շա՛տ սիրեց ձկնորսը
Եվ իր միտքը փոխեց
Եվ սրտի տիրուհուն
Ծովաշխարհ բաց թողեց,

Որ ապրի հեքիաթը,
Ալիքվի ապառնի,
Ապա գա՛ անհունից
Ու կյանքը թա՛փ առնի:

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԵՐ

Հայերէնը կը զուարճանայ

1.Մուրց-մրցիլ-մրցում

Ձեր մտքին ծայրէն կրնա՞ր անցնիլ, որ ***մրցիլ*** բային արմատը ըլլար ***մուրց*** եւ ան նշանակէր ***բռունցք***, ***կռուիլ***, իսկ ***մրցում***-ը իր նախնական կիրարկութեան մէջ նշանակէր... ***բռնցքամարտ*** կամ ***կռիւամարտ***:

Եւ ահա ժամանակին հետ այս նախնական, ըսենք՝ նեղ, նշանակութիւնը անսահմանօրէն ընդլայնած է եւ այսօր ***մրցիլ*** կը նշանակէ առօրեայ կեանքի անհամար մարզերու մէջ ուրիշը կամ ուրիշները ***գերազանցելու***, ժողովրդախօս-սակցական ոճով՝ անցնելու, փորձը, ճիգը, քըննութիւնը. օրինակ՝ վազքի մրցում, ֆութպոլի մրցում, լողի մրցում, պլոթի մրցում, շատակերութեան եւ շատախմութ-եան մրցում. ու տակաւին մրցում՝ ի խնդիր պաշտօնի, աստիճանի, տիտղոսի եւ շատ ուրիշ բաներու:

2. Մրցանիշ

Մուրց արմատով ունինք բարդ եւ ածանցաւոր բառերու բաւական ճոխ՝ հայերէնավայել օժիտ մը, որուն գոյառումը սկսած է հազարամեակներ առաջ: Մենք պիտի սերտենք անոնցմէ միայն մէկը՝ ***մրցանիշը***:

Այս բառին առաջին անգամ կը հանդիպինք Գայայեանի մէջ՝ 1938-ին.

-- «Մրցանիշ – մրցումով ձեռք բերուած բարձրագոյն նիշ՝ թիւ»:

Ան կը ներկայանայ իբրեւ հոմանիշ ֆրանսերէն ***record***-ին:

Հետաքրքրական է, որ ֆրանսերէն ***record***-ը իր կարգին ուշ յառաջացած բառ է. զայն չենք գտներ 19-րդ դարու ֆրանսահայ բառարաններու մէջ:

Առաջին անդրադարձողը անոր կ'ըլլայ Մեսրոպ Նուպարեանը 1911-ին.

«Record – վերագոյն աստիճան (շուտութեան)»:

Այսինքն՝ արագութեան բարձրագոյն աստիճան:

Որ յետոյ պիտի նշանակէր բարձրագոյնը բոլոր մրցումներու մէջ:

***

Այս բառը կը գտնենք 1969-ին Ակադեմիայի քառահատոր բացատրականին մէջ՝ մերինէն տարբեր նշանակութեամբ.

-- «Մրցանիշ – մրցութեան ժամանակ շահուած ցուցանիշ»:

Այսինքն՝ որեւէ մրցումի մէջ ստացուած որեւէ նիշ/նշան. ուշադրութի՛ւն՝ ո՛չ բարձրագոյնը, ինչպէս է արեւմտահայերէնի մէջ:

Նոյնը կը գտնենք արեւելահայ հետագայ բառարանագիրներուն քով:

Իսկ մրցումի մէջ «բարձրագոյն նիշը» արտայայտելու համար պարզապէս փոխ առած են օտար ***record***-ը՝ ռեկորդ տառադարձութեամբ:

-- «***Ռեկորդ*** – աջողութեան

բարձրագոյն աստիճանը, որ ձեռք է բերուում մրցութեան ժամանակ՝ մարզութիւնների կամ աշխատանքի այլ բնագաւառում» (Մալխասեան, 1944):

Ափսո՛ս:

Եթէ Մալխասեան իր օրին որդեգրած ըլլար ***մրցանիշը***՝ այն նշանակութեամբ, որ ան արդէն ունէր արեւմտահայերէնի մէջ, ապա այդպէս ալ կը շարունակուէր. մեր երկու բարբառները օտարի ***record***-ին դիմաց կ'ունենային ազգային մէկ միասնական բառ, միւս կողմէ՝ արեւելահայերէնը ապականող մէ՛կ օտարաբանութիւն կը պակսէր:

ԲԱՌԱՇՂԹԱ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ

Բառաշղթան ճիշտ կազմելու դեպքում հետևյալ բանալիով կկարդաք հայկական ասացվածք՝ «ԳՈՂ՝ ՍԻՐՏԸ՝ ԴՈՂ»:

2-3, 3-7, 3-3, 6-3, 8-1, 9-3, 9-1, 13-4, 12-3, 3-7, 3-8:

1. Միրգ
2. Կենդանու «երեխան»
3. Թաքուն
4. Ցանկություն
5. ծեծել
6. Ժամանուն հին տոմարում
7. Ձիղ
8. Նստվածք
9. Հասարակ
10. Քուն
11. Ատոմ
12. Խոստում
13. Բնության երևույթ

1			2		3							
4		5					6					7
			8			9						
10			11				12				13	


Բառաշղթայի
պատասխանը

ղɽսɬɬɽսճოɬղՇիოյր
՛յɽսիվչ ՛Հիɽսկ ՛կվվղ ՛ղოիოմսմოտ
՛տվվն ՛նսოմՂ ՛ղիოოɽսն ՛ևՀինսოջ
՛ֆնվ ՛վնսեოտնսოե ՛եოջ ՛ֆնչն

ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր

www.aghbyur.com



ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

www.naregatsi.org